# Աղբի վերամշակման հանրահռչակում

Ինչպես սովորեցնել և բարձրացնել քաղաքացու իրազեկությունը



RECYCLING
UPCYCLING
DOWNCYCLING

# Վերամշակում (Recycling)

- Անգլերենից թարգմանաբար վերամշակում նշանակում է «երկրորդային թափոններից հումքի արտադրության գործընթաց»: Այնպիսի ֆրակցիաները, ինչպիսիք են թուղթը, պլաստիկը, մետաղը, ապակին և ավելի բարդ կոմպոզիտային նյութերը, կարող են վերամշակվել և փոխակերպվել անճանաչելիորեն:






# Դաունսայքլինգ (Downcycling)

- Downcycling-ը վերամշակման ենթատեսակ է:
- Վերամշակման գործընթացում հումքի որակը նվազում է, ուստի դրանից այլևս հնարավոր չէ նույնական արտադրանք պատրաստել: Հումքը կարող է օգտագործվել այլ խմբերից ապրանքներ պատրաստելու համար:
- Օրինակ, PET շիշը կարող է վերամշակվել սինթետիկ մանրաթելերի մեջ և դառնալ շապիկ կամ գորգ: Ընդ որում, գորգն այլևս չի կարող շշի վերածվել, քանի որ հումքի որակն ակնհայտորեն ավելի ցածր է:



# Ափսայքլինգ (Upcycling)

- Upcycling-ը կատարելագործում է, վերահայտնագործում, գոյություն ունեցողների մեջ նոր ձևեր տեսնելու փորձ:
- Այն կոչվում է ստեղծագործական վերամշակում:
- Օրինակ՝ գնում եք խանութ և ձեզ անհրաժեշտ է հյութ և ծաղկաման, ապա կարող եք գնել միայն հյութը, իսկ խմելուց հետո զարդարել տոպրակը որպես ծաղկաման օգտագործելու համար՝ դրանով իսկ բարձրացնելով դրա արժեքը:




MAESTRO
Parajanov


183


MAESTRO
Сергей Параджанов
Parajanov


207


MAESTRO
Сергей Параджанов
Parajanov


349

# Ինչպե՞ս երեխաներին սովորեցնել վերամշակման մասին մանկապարտեզում



- Երեխաներին սովորեցնել վերամշակման ենթակա նյութերը «վերամշակել»՝ դրանցից պատրաստելով սեփական խաղալիքները, օր.՝ մեքենա, ռոբոտ և այլն



- Այլևս չօգտագործվող խաղալիքները կամ զգեստները աղբը նետելու փոխարեն, երեխաներն ինքնուրույն ընտրում են, թե որոնք այլևս չեն օգտագործելու և դայակների հետ միասին տանում են նվիրատվության



# Խաղերի կազմակերպում, որոնց միջոցով երեխաները կսովորեն, թե ինչպես պետք է տեսակավորել աղբը

- Երեխաների հետ միասին աղբը բաժանել չորս մասի՝ պլաստիկ, թուղթ, ապակի, մետաղ:
- Երեխաներին բաժանել չորս համապատասխան խմբերի, որ իրենք իրենց տրված նյութերով նոր իրեր պատրաստեն:
- Այնուհետև քվեարկություն կազմակերպել և հաղթող խմբին պարգևատրել:
- Հաղթող խմբի պատրաստած իրերը հանել ցուցադրության ու մշտապես դնել դասասենյակում նախատեսված վայրում:
- Մյուս մրցույթից հետո այդ շարքին կավելանան նորերը:






# Վերամշակման հետ կապված երեխաների հետ մանկական մուլտերի դիտում

- What is recycling? | Recycling for children | Learn to recycle | Polly Olly - YouTube



# Երեխաների հետ մանկապարտեզի հարակից տարածքում աղբահավաք կազմակերպել

- Աղբահավաքի ընթացքում երեխային բացատրել, թե ինչ վնասակար ազդեցություն կարող է ունենալ թափոնը:
- Օրինակ՝ ասել, որ թռչունները կարող են ուտել ու վնասվել



# Ինչպե՞ս երեխաներին վերամշակման մասին սովորեցնել դպրոցում



# Դպրոցական ծրագրի մաս

Սովորել`




- Ի՞նչ է վերամշակումը
- Ի՞նչը պետք է վերամշակվի
- Ի՞նչի համար պետք է վերամշակվի
- Ի՞նչ վտանգներ ունեն թափոնները
- Ի՞նչի կարող է հանգեցնել չվերամշակելը
- Ի՞նչպես տեսակավորել աղբը
- Ի՞նչպես նպաստել աղբի վերամշակմանը

# Շարադրությունների, թելադրությունների, փոխադրությունների կազմակերպում

Օրինակ՝ ժամանակ առ ժամանակ աշակերտներին հանձնարարել բնապահպանության և բնության հանդեպ իրենց վերաբերմունքի մասին շարադրություն գրել, որը երեխաներին կստիպի ևս մեկ անգամ գիտակցել բնապահպանության ու վերամշակման կարևորությունը, ու ևս մեկ անգամ վերանայել իրենց վերաբերմունքը բնության հանդեպ:



# Էքսկուրսիաների կազմակերպում

- Ժամանակ առ ժամանակ էքսկուրսիաների կազմակերպում դեպի վերամշակման կենտրոններ



# Թեմային առնչվող ֆիլմադիտումների կազմակերպում



# Դպրոցի պատերը վերամշակման մասին պաստառներով ողողել



# Մրցույթների կազմակերպում

- Դասասենյակում տեղադրել տեսակավորված աղբի համար նախատեսված աղբարկղեր
- Երեխաներին բաժանել մի քանի խմբի
- Մրցել, թե ով ավելի շատ վերամշակման նյութ կհավաքի
- Աշակերտներին պարգևատրել՝ խրախուսելու և մոտիվացնելու համար



# Հետազոտական աշխատանքների իրականացում

- Թուղթը, ալյումինե տարաները և պլաստիկ շշերը այն առարկաներն են, որոնք ուսանողները կարող են ամեն օր վերամշակվելիս տեսնել:
- Բայց ի՞նչ կասեք այնպիսի իրերի մասին, ինչպիսիք են կոտրված մատիտները, մարտկոցները և այլն: Դասարանը բաժանեք մի քանի փոքր խմբերի և նրանցից յուրաքանչյուրին հանձնարարեք այն իրերի ցանկը, որոնք ավելի դժվար է վերամշակել:
- Այնուհետև թող նրանք ուսումնասիրեն, թե ինչպես կարելի է այդ իրերը վերամշակել:
- Որպես վերջնական աշխատանք՝ աշակերտները իրենց բացահայտումները դասարանին կներկայացնեն:



# «Կանաչ ակումբ»

- Դպրոցում բացել «Կանաչ ակումբ»
- Երեխաներին հավաքագրել ակումբում
- Վերամշակման մասին դասընթացներ անցկացնել
- Պրակտիկ աշխատանքներ իրականացնել: Օրինակ՝ վերամշակման համար իրեր հավաքել, տանել-հանձնել վերամշակման, ինչպես նաև այլն էկոլոգիային նվիրված միջոցառումներ:



# Դպրոցի լաբորատորիաներում երեխաներին սովորեցնել, թե ինչպես թուղթ վերամշակել

- Երեխաներին սովորեցնել թուղթ վերամշակող սարքավորումից օգտվել, և վերամշակված թղթից տարբեր իրեր պատրաստել:
- Եթե չկա թուղթ վերամշակող սարքավորում, ապա ինքնուրույն այն անել:





# Դպրոցների միջև մրցույթների կազմակերպում

- Այն դպրոցը, որը ամենաշատ տեսակավորված աղբը կհանձնի վերամշակման, կպարգևատրվի Շրջակա միջավայրի նախարարության կամ այլ կազմակերպությունների կողմից:



# Ֆիլմերի մրցույթի կազմակերպում

- Երեխաները տեսանկարահանում են, թե իրենց ընտանիքներում ինչպես են աղբը տեսակավորում ու վերամշակմանն առնչվող այլ գործողություններ անում:
- Հետո իրենց նկարահանած ֆիլմերը ցուցադրում են դասարանում:
- Քվեարկության միջոցով որոշվում են երեք ամենալավ ֆիլմերը:
- Հաղթողները պարգևատրվում են խրախուսական մրցանակներով:



# Դասագրքերի փոփոխություն

- Բոլոր առարկաների դասագրքերը պետք է ունենան էկոլոգիական վերաբերող բաղադրիչ



# Ինչպե՞ս հանրահռչակել վերամշակումը

- Ժամանակ առ ժամանակ մարդկանց էլեկտրոնային եղանակով (SMS) ծանուցել վերամշակման կարևորության ու երկրում առկա վերամշակման համար նախատեսված սարքավորումների մասին:
- Օրենսդրական փոփոխության ճանապարհով սահմանել մեդիաների համար էկոլոգիական և վերամշակման բաղադրիչի առկայություն:
- Վերամշակման մասին գովազդել մամուլում, ռադիոյում, գովազդային վահանակներում և հեռուստատեսություններում:
- Հարցազրույցներ ոլորտի մասնագետների հետ:
- Հայտնի մարդկանց ներառումը՝ գովազդային արշավների մեջ՝ ավելի մեծ լսարան ներգրավելու համար:
- Աղբամանների վրա հռչակ ունեցող կազմակերպությունների գովազդների տեղադրում:

# Մի քանի առաջարկ Հայաստանի համար

# Գունավոր մետաղների թափոնների վերամշակում

- Հայաստանի Հանրապետությունը որպես միջավայր, որտեղ հետսովետական արտադրամասերից և այս պահին ևս գործող արդյունաբերական ձեռնարկություններից, ինչպես նաև կենցաղում կիրառվող ապրանքներից գոյանում է մեծ քանակի գունավոր մետաղների թափոն, պետք է ունենա ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած ֆիլտրման համակարգեր և շրջակա միջավայրի համար ոչ թունավոր արտանետումներ ունեցող հալման արտադրամանասեր: Դրանք քաղաքացիներից հավաքագրելով այդ թափոնները՝ էլեկտրական վառարանների միջոցով կվերամշակեն և կարտադրեն հալվածքներ, որոնք, արտահանվելով համաշխարհային շուկաներ, կնպաստեն տնտեսության զարգացմանը՝ աղբը վերածելով փողի:

# Նվազեցնել պետական կառույցներում թղթե փաստաթղթաշրջանառությունը

- Վերացնել քաղաքացուց դիմումներ, և քաղաքացուն տեղեկանքները թղթային տեսքով տալու մեխանիզմը: Փոխարինել այն, կազմակերպել էլեկտրոնային ճանապարհով:

- Արգելել պետական կառույցներում աշխատակիցների միջև տպագրված փաստաթղթերի փոխանակությունը և փոխարենը օգտվել էլեկտրոնային գործիքներից:

# Վերամշակումը այլ երկրներում

# Դեպոզիտի վերադարձման սխեմա

Շշերը, որոնք կարող են վերամշակվել, համապատասխան պիտակավորված են:
Դրանք գնելիս սպառողները վճարում են ավանդ, որը Գերմանիայում տատանվում է
€0,08-ից մինչև €0,25: Այս գումարը փոխհատուցվում է դատարկ շիշը մանրածախ խանութ
վերադարձնելուց հետո: «Միակողմանի» պլաստիկ շշերը գտնվում են ավելի բարձր
գների միջակայքում, մինչդեռ բազմակի օգտագործման ապակե և պլաստիկ շշերի համար
ավանդը սովորաբար չի գերազանցում 0,15 եվրոն:



# Կանաչ կետանշման սխեմա

Գերմանիայում վերամշակմանը ուղղված ամենահաջող ծրագրերից մեկը:

Կանաչ կետանշումը խորհրդանիշ է, որն օգտագործվում է որոշ եվրոպական շուկաներում փաթեթավորման վրա՝ ցույց տալու, որ արտադրողը ֆինանսական ներդրում է կատարել փաթեթավորման վերականգնման համակարգում՝ ֆինանսավորելով իր փաթեթավորման տեսակավորումը, վերամշակումը և վերականգնումը:

# Գունավոր աղբարկղերի տեղադրում՝ նախատեսված տարբեր տեսակի աղբի համար

- Կապույտ աղբարկղ - թղթի և ստվարաթղթի համար
- Կանաչ և սպիտակ աղբարկղ - ապակու համար
- Դեղին/նարնջագույն աղբարկղ - պլաստիկի և մետաղների համար
- Բրաուն աղբարկղ - կենսաքայքայվող ապրանքներ
- Մոխրագույն/սև աղբարկղ-մնացած ամեն ինչ, որը չի կարելի վերամշակել, օրինակ՝ օգտագործված տակդիր, կատուների աղբ, կենդանիների թափոններ և մոխիր



# Ինդոնեզիայում

Մարդիկ աղբը հավաքում ու դնում են իրենց շենքի դիմաց հատուկ աղբի համար նախատեսված վայրերում, որը այնուհետև աղբահանության մեքենան հավաքում է: Մարդիկ աղբահանության մեքենային վճարում են աղբը հավաքելու համար:

Իսկ եթե մարդիկ անձամբ են տեսակավորված աղբը հանձնում, ապա պետք չէ ոչինչ վճարել:



# Հարավային Կորեայում

- Աղբարկղը ստուգում է մարդկանց թափոնների կառավարման սովորությունը և որոշում, թե մարդիկ ինչպես են առանձնացրել ծվի կեղևը մնացած օրգանական թափոններից:
- Թափոնների տեսակավորման կանոններին հետևելու մշտական ձախողումը կարող է հանգեցնել հարկադիր տեղահանման:Նրանք, ովքեր կօգտագործեն չթույլատրված աղբի տոպրակներ, կպատժվեն մինչև մեկ միլիոն վոն (1650 Տ$) տուգանքով:
- Կառավարությունը դրամական պարգևներ է առաջարկում հանցագործների ինքնության մասին տեղեկությունների համար:

# Հարավային Կորեա

- Ամենաուշագրավ տեխնոլոգիաներից մեկը, որը հարավկորեացիներն օգտագործում են իրենց թափոնների կառավարման համակարգում, սննդի թափոնների էլեկտրոնային աղբարկղն է:
- Մարդիկ ստիպված են փակցնել իրենց նույնականացման քարտը՝ նախքան աղբը հանրային աղբարկղը նետելը: Այնուհետև աղբարկղը չափում է աղբի քաշը, հաշվարկում, իսկ հետո աղբի հաշիվը ուղարկում նշված անձին:



# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

